ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Ծ. Իսակովի պող. 36/4 շենքի հ. 20՝ 40.8 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.16072013-01-0005 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Անահիտ Սամվելի Խաչատրյանին և Արման Արմենի Հունանյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ծ.Իսակովի պող. 36/4 շենքի հ.20՝ 40.8քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Անահիտ Սամվելի Խաչատրյանին և Արման Արմենի Հունանյանին:

Ծ. Իսակովի պողոտայի հ.36/4 շենքի հ.20 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.16072013-01-0005 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևանի քաղաքապետի 20.01.1998թ. հ.12 որոշմամբ՝ Բ-2 թաղամասի հ. 74 շենքի 1-ին հարկի ոչ բնակելի տարածքը վարձակալական հիմունքներով տրամադրվել է անհատ ձեռներեց Անահիտ Խաչատրյանին: Տարածքին՝ Երևանի քաղաքապետի 02.06.2011թ. հ.2272-Ա որոշմամբ տրամադրվել է Ծ. Իսակովի պողոտայի հ.36/4 շենքի հ.20 հասցեն: Անահիտ Խաչատրյանը իր անձնական միջոցների հաշվին տարածքը հիմնանորոգել է որպես բնակարան և իր որդու՝ Արման Հունանյանին հետ փաստացի բնակվել և հաշվառվել է քննարկվող բնակարանում, /հիմք՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մալաթիայի անձնագրային բաժանմունքի 22.08.2019թ. հ.22/6-4074 գրություն, «Արմեն-19» համատիրության 4.09.2019թ. և 11.09.2019թ հաստատված տեղեկանքներ, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով վերջիններս հնարավորություն չեն ունեցել այն մինչ օրս սեփականաշնորհել:

Կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 05.09.2019թ հ.ԱՏ-05092019-99-0171264 տեղեկանքի համաձայն՝ Անահիտ Խաչատրյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև վերջին 5 տարվա ընթացքում ՀՀ տարածքում վերջինիս կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ, իսկ Արման Հունանյանի անվամբ գրանցված է Գ.Արծրունու փողոցի հ.90 շենքի հ.53 բնակարանի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունք 1/5 բաժնեմասով:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ/ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ